

# ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՅԱԻՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ (ԱԱՊ) ՕՂԱԿՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ԱԱՊ օղակում վարակի կանխարգելման աշխատանքները պետք է իրականացվեն **Նախքան** պացիենտի բուժհաստատություն ժամանելը, **այցի ընթացքում** և **հետո՝** ամբողջությամբ մաքրելով և ախտահանելով տարածքը:

## Նախքան այցը՝

1. Խրախուսել պացիենտներին նախապես զանգել և այցի համար պայմանավորվածություն ձեռք բերել:
2. Շնչառական գանգատների դեպքում հեռախոսով իրականացնել տեսակավորման ընթացակարգ (տրիաժ)՝ պարզելու, թե արդյոք այցն անհրաժեշտ է, և թե արդյոք հնարավոր է դեպքը վարել տնային պայմաններում:
3. ԱԱՊ բուժհաստատություն այցի անհրաժեշտության դեպքում պացիենտը պետք է նախապես զանգով տեղեկացնի շնչառական ախտանշանների մասին և իրականացնի վարակի տարածման կանխարգելիչ միջոցառումներ՝ կրի դիմակ (անհնարինության դեպքում՝ օգտագործի անձեռոցիկ):

## Այցից հետո՝

1. Ցածր ռիսկայնությամբ բժշկական իրերի ախտահանում 70° էթիլ սպիրտով (ջերմաչափ, արյան նմուշառման բարձիկ, սթետոսկոպ):
2. Շրջակա միջավայրի մաքրում և ախտահանում՝ լվացող միջոցների և ախտահանիչ նյութերի կիրառմամբ:

## Այցի ընթացքում՝

1. Վերահսկել/սահմանափակել բուժհաստատության մուտքերը:
2. Այցելուներին ապահովել միանվագ օգտագործման դիմակներով:
3. Ապահովել, որ կորոնավիրուսային հիվանդության ախտանշաններով անձինք պահպանեն վարակի կանխարգելման միջոցառումները՝



Ձեռքերի  
հիգիենա



Շնչառական  
հիգիենա



Հագի  
հիգիենա

4. Իրականացնել պացիենտի արագ տեսակավորում և մեկուսացում **160լ/վ** բնական օդափոխությամբ ապահովված սենյակում:
5. Կրել անհատական պաշտպանիչ միջոցներ պացիենտի հետ շփվելիս և միջամտություն իրականացնելիս:
6. Ձեռքերը պատշաճ ախտահանել պացիենտից հետ շփվելուց առաջ և հետո:



Թեժ գծի հեռախոսահամարներ՝  
**8003 և 060 83 83 00**



Առողջապահության  
Նախարարություն  
Ministry of Health of the Republic of Armenia